

11137

ՄՐՅԱՀՐԱՎԵՐ

ՊԻՅԵՆ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
СРАВНИТЕЛЬНОЙ
ИСТОРИИ
И Филологии
Академии Наук
СССР

891.71

Զ-14

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931—VIII ՌՈՍՏՈՎ,

831.71
2-14

119

Ե. ԶԱԿՈՆՍԿԻ

ՄՐՅԱՀՐԱՎԵՐ

ԴԻՅԵՍ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЛІТЕРАТУРЫ
И ИСКУССТВ
Академии Наук
СССР

Թարգմ. Հ. Բաղդասյան

1931—VIII

ՄՈՍԿՎԱ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹ. ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

Н. ЗАДОНСКИЙ

ВЫЗОВ

Пьеса в 2 действиях

59996.66
НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

1931—VIII

Сев.-Кав. фр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.
«К Р А Й Н А Ц И З Д А Т»Уполкраздт №А 3-9. Ростов-Дон. Газ.-кн. тип. СККПО.
Ст.-ф. А5—148x210 Зак. № 449—1000.

25 SEP 2006

19 NOV 2010

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՂԱՐԻՔՅԱՆ ՍՏԵՓԱՆ.—Հասակավոր բանվոր.

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԻՄՈՆ.—Ստեփանի մտերիմն ու համախոհը, նույնպես հասակավոր.

ՇՈՐՇԱՆ.—Ստեփանի կինը.

ԲԻՋՈՅԱՆ ԿԱՐՈ.—Ղարիբյանների տնկեցը, հարբեցող և գործավիճ (պրոպուլզնիկ).

ՍԵԴՐԱԿՅԱՆ.—գործարկումի տնդամ, մորուքավոր, անճոռնի.

ՄԻՇՈՒԿ.—կոմյերիտական.

ՍԱԹՈ.—բանվորուհի:

Դործուրյունը կատարվում է շաբաթի զործարաններից մեկում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը՝ Ստեփանի բնակարանը: Յերկու պատուհանով մաքուր սենյակ: Ուղիղ դիմացը՝ մուտքի դուռը: Ձախ՝ ուրիշ սենյակ տանող դուռը: Պատի ժամացույցի սլաքը մոտենում է 3-ին: Բիշոյենց Կարոն, քնաթաթախ, մեկ վոտքը բոբիկ, նստած է պատուհանի տակ, թաղթի վրա և թառի նվագակցությունը ու խաղոտ՝ ձայնով յերգում է: Շուշանը սենյակին է ավելում:

ԿԱՐՈ. Յերեկ գիշեր յերազումս ձեզ տեսա,
Բախտի ծովում լողանում եյի յես անհաղ.

Յերենեկ չե՛ր, վոր գլխիս տերը լինեյի

Ու քնիցս չզարթնեյի յես յերբեք...

ՇՈՒՇԱՆ (ավելում է). Ե՛հ, ի՜նչ կա վոր. դու խո եղ բանի վարպետն ես:

ԿԱՐՈ (չլսող ձեվանալով շարունակում է).

Յերենեկ չե՛ր վոր գլխիս տերը լինեյի

Ու քնիցս չզարթնեյի յես յերբեք...

ՇՈՒՇԱՆ. Յերեկե՛ր բան կլինե՛ր, հմ. թո՛ւ, ի՜նչ ասեմ քեզ մարդ ասողին. սմա ձրիակերն ես, հմ, իսկական լոթի...

ԿԱՐՈ. Ի՜նչ: Դու, Շուշան ջան, եղ քու բուրժույի որենքներից վաղ անցիր: Ի՜նչ գիտես, վոր յես լոթի յեմ և վո՛չ թոքախտավոր-ցավագարի մեկը. ի՜նչ գիտես, վոր յես անկար ինվալիդ, չեմ. ախր ինչի՛ յեմ ձրիակեր:

ՇՈՒՇԱՆ. Հա, ինչպե՛ս չե, ցավագարի մեկն ես, խեղճ տղա... Ընկերներդ գործարանում արգեն, կարծում եմ, յերկու շապիկ փոխեցին, իսկ սա եստեղ անկար ինվալիդ է դառել... Ինչքան վոր կոնծում ես...

ԿԱՐՈ. Հա, եղ մեկը ճիշտ է. ինչքան կոնծում ես, ենքան ավելի քաշում ե... Ի՜նչ կլինե՛ր, վոր վարձք անես ու մի գավաթ թավազա անես, են ժամանակ զխաղաղս ել կանցնի. հը՞:

ՇՈՒՇԱՆ. Ինչպե՛ս չե, իշտանդ թըջոց դեր. Յես քո գիտցած դժբերից չեմ:

ԿԱՐՈ (սանրվում է). Եղ դու լուրջ ես ասում, հմ:

ՇՈՒՇԱՆ (բարկացած). Դե, գնա կորի աչքիցս. հետք խոսելս ել չի դալիս (նայում է ժամացույցին): Շուտով ա՛նա յերեքը կլինի, գործարանում հիմա հերթափոխն է սկսվում, իսկ սա եստեղ կոնծելիքի մասին է դարդ անում...

ԿԱՐՈ. Եղ ասածդ ճիշտ է. բայց մի հարցրու, թե ինչո՞ւ յե եղպես. ինչո՞ւ յես չեմ ուզում աշխատանքի գնալ (կրճիկն խմելով), շատ հասկանալի յե. յես, Բիշոյենց Կարոս, ազատ բանվոր պրոլետար եմ և չեմ ուզում իմ մատաղ կյանքս սեպնեմ...

ՇՈՒՇԱՆ. Հենց դրա համար ել պատռած փոխանով ես ման դալիս... Ձեմ ուզում: Յերեկի խելոք բան ասեց, աշխատել չեմ ուզում: Եղ հո խելառություն է, ուրիշ վնչինչ:

ԿԱՐՈ. Ձե, խելառություն չե, հապտ, ինչպես ասած, անգիտակցություն (նվագում է քառն ու յերգում է):

ՇՈՒՇԱՆ. Ձե, Կարո, քեզ կարգի բերելը հեշտ բան չի: Վաղճը պետք է ձեզպեսներին ձեռք առնել...

ԿԱՐՈ (շարունակում է նվագել). Դու առաջ քո մարդուդ ձեռք առ...

ՇՈՒՇԱՆ. Իմ մարդուն հանգիստ թող. նա արդեն քսան տարի յե, վոր աշխատում է իր տեղում, իսկ յերգել է միայն տոներին:

ԿԱՐՈ (դադարում է նվագել). Եղ դու լուրջ ես ասում, հմ:

ՇՈՒՇԱՆ. Հապա ի՜նչ գիտեյիր: Մարդս միշտ հալալ հացի տեր է յեղել և ենպես ել գերեզման կմանի:

ԿԱՐՈ. Ուրեմն եղպես. մեջտեղը գիտակցություն կա և... առհասարակ... Շատ լավ. ամա վոր յես ձեզ մի որինակ բերեմ, են ժամանակ:

ՇՈՒՇԱՆ. Ելի ի՜նչ որինակ-մորինակ:

ԿԱՐՈ. Սոսքս մարդուդ գիտակցության մասին է:

ՇՈՒՇԱՆ. Այսի՜նքն:

ԿԱՐՈ. Այ յես ձեզ կպատմեմ մի դեպք: Յերեկ չե առաջի որը զավկում եմ մտնում, տեսնեմ, ենտեղ հավաքվել են ու անվերջ խոսում-փրփրում են. և ամենից ավելի փրփրողը Ստեփան ապերը չլինի: Բայց մեկ հարցնող լինի, թե բանն ինչո՞ւն է: Բանից դուրս է դալիս, վոր Դերարենց գործարանը մեզ մրցման է կանչել: Հասկացա՞ր:

ՇՈՒՇԱՆ. Մի քիչ հասկացա:

ԿԱՐՈ. Ե՛նպես ել գիտեյիր: Ձեք հասկանում, վորովհետե պետքին չափ կուլտուրական չեք: Իսկ հասկացողի համար պարզ է, վոր (մտքը

ծալում է) առաջինը՝ աշխատանքի արտադրողականությունը պետք է բարձրացնել, բայց ստանալ նույն աշխատավարձը:

ՇՈՒՇԱՆ. Հետո:

ԿԱՐՈ. Յերկրորդը՝ ծախսերը պակասեցնել, վերջ տալ պարապու... (կմկմալով) և մեկ խոսքով լայն մասսաների գիտակցությունը...

ՇՈՒՇԱՆ. Ախր ես բաներում ինչ մատ ունի Ստեփանը:

ԿԱՐՈ. Հենց բանն էլ են է, վոր նա ամենքի ասածին դեմ է: Եղ ձեր մրցույթները հենք ուղղում մենք, բղավում է նա. նիսիա բան հենք ուղղում, նաղդ փողով գործ տեսեք, ձրի բան չկա. են վաղ եր, վոր եշը կաղ եր... Այսինքն Ստեփանը, ինչպես ասում են, համարձակվում է խոսել պրոլետարի գիտակից գիտակցություն դեմ և ժողովրդին խելքից հանում... Դու եստեղ քո Ստեփանին յերկինք էս բարձրացնում. ո՞վ է քո Ստեփանը՝ գիտե՞ս... Գիտակից մարդու համար ասելն էլ ամոթ է... (դառնում է դեպի լուսամուտը):

ՇՈՒՇԱՆ. Ասածիդ կեսը, Կարո, սուտ կլինի, չէ:

ԿԱՐՈ (նայում պատուհանից). Այ, քո Սուլթանն ինքն է գալիս, նրան էլ հարցրու... Ո՛ր, նա մենակ չի, հետն էլ զավկումն անդամ Սեդրակյանը (առագապես վոսֆի յե կանգնում, վերցնում է քաղը յեվ պանվում է դուռն յեսելը): Շուշան ջան, քեզ մատաղ, ինձ մի՛ մատնիր. եղ մորուքավոր սատանան վոր իմ մասին հարցնե, կասես, վոր հիվանդ եմ ու սաղ գեշերը տանջվել եմ...

ՇՈՒՇԱՆ. Ինչպե՞ս չե, եղ եր պակաս:

ԿԱՐՈ (զուլար դռներից դուրս հանած). Կասես, թե վո՛չ ուտում, վո՛չ էլ խմում եմ (քաղնվում է):

ՇՈՒՇԱՆ. Հենց են է, վոր ածում ու խաղ է ասում...

ԿԱՐՈ. Ձե, Շուշան ջան. յերգի մասին բերան չբանաս (քաղնվում է):

ՇՈՒՇԱՆ. Դե լավ, մեղքս յեկավ... (զնում է. մի բալետից մեկնում են Սեփանը յեվ Սեդրակյանը)

ՍՏԵՓԱՆ. Ձե, Սեդրակյան, դու գլխիս ագիտացիա մի կարգա: Յես, ճիշտ է, ամենքիդ հակառակ չեմ գնա, ամա իմ խելքով եղ գործը ծայրից մինչև վերջը սխալ է ու ծուռ:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Տո, խելքի տուրակ, վերջապես հասկացիր (ցույց է ցալիս լրագիրը). ա՛յ, տեսնում ես...

ՍՏԵՓԱՆ. Նո՛ւ, ի՛նչ կա վոր, լոկ թվեր են, ելի թվեր:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Հա թվեր են, բայց ի՛նչ թվեր: Ես թվերը մերն են, խորհրդային թվեր են... Եստեղ պարզ պատկերանում է մեր հընգամյա պլանը: Ես թվերը խոսում են համ որական յոթժամյա աշխա-

տանքի, համ աշխատավարձի, համ էլ մեր ամբողջ կյանքի մասին, իսկ դու վեր ես կացել ու հակառակ ես խոսում...

ՍՏԵՓԱՆ. Ախպեր, իմ ասածը ուրիշ բան է ախր... Յես խոսում եմ Դիրաբենց մրցանիկների մասին... յես ասում եմ, վոր մեզ հարկավոր չի եղ տեսակ գործի կաշն, եղ տեսակ յուծի տակ մտնել:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Պրծավ, հենց եղ է վոր դեմ ես գնում, Է: Գու ա-սելովդ մրցակցությունը պետք բան չի, ինդուստրիալիզացիան պետք չի, հնգամյակը մի կողմ դնելու յե... Ախ դու խելքի տուրակ, ախր դու հին բանվոր ես, ախոս չե: Վերցրու մի լավ կնոջա ու խելքիդ տեղ արա (լրագիրը սեղանի վրա յե դնում): Եստեղ խոսքով եղա, միացի. կարելի յե ժողովք արդեն սկսեցին... Գալիս ես, թե՛ չե:

ՍՏԵՓԱՆ. Ո՛ւր:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ժողովի:

ՍՏԵՓԱՆ. Ելի ի՛նչ կա:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Մրցման համար հանձնաժողով պիտի ընտրվի:

ՍՏԵՓԱՆ (մոռալ). Ձեմ գնա:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Պատճառը:

ՍՏԵՓԱՆ. Միտք չունի:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Դե, դու գիտես: Բայց դուր տեղը պտորում ես, Ստեփան (ուզում է մի բան ասել, բայց ձեռները քալանաւում ու գնում է):

ՍՏԵՓԱՆ (նսնում է սեղանի մոտ, նայում է լրագրին ու կարդում).

...«Հսկա գործարանները շինելուց և յերկրի ինդուստրացումից դատ, հնգամյակը նախատեսում է նմանապես բոլոր ձեռնարկությունների որական յոթժամյա աշխատանքի փոխանցումը, ինչպես նաև բանվորների ուսող աշխատավարձի 71% բարձրացումը...» Հ՛ըմ, յերեկի՛ ներքի ուսող աշխատավարձի 71% բարձրացումը... «բայց չպետք է մոռանալ, միտք... (պաուզա, շարունակում է կարդալ) ...«բայց չպետք է մոռանալ, վոր մրցումն ու հնգամյակը անքակտելի կերպով իրար կապված են, վորովհետև այս պլանը կարող է իրագործվել միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատավոր լայն մասսաների ակտիվության դեպքում...» (դադարում է կարդալ): Նո՛ւ, եղ արդեն լսել ենք... դուր տեղը եշի նահատակ լինելու պետք չկա... Եղ արդեն սատանի ոյին է (մոտենում է լվացատանին ու ձեռները լվանում: Սենյակից գզուշուքյամբ դուրս է գալիս Կարո՝ չուր կաղմը նայելով):

ԿԱՐՈ. Բոլորովին ուղիղ ես ասում, Ստեփան ապեր. ասա, մի վախիր, աստված վկա:

ՍՏԵՓԱՆ (աղիամբարանով). Դու ի՛նչ բանի յես, ելի՛ հիվանդ:

ԿԱՐՈ (նսնում է սեղանի մոտ). Ելի:

ՄՏԵՓԱՆ. Տեսնում եմ... Աֆֆերիմ տղա, աֆֆերիմ:

ԿԱՐՈ. Եղ զու լուրջ ես ասում, հա՛ (մտնում է Շուշանը. դնում է սեղանի վրա միս լեվ ապուր. ապա պահառանից հանում է գդալներ, ափսոսանքով լեվ հաց):

ՇՈՒՇԱՆ. Եղ Բնչ է, Ստեփան, ետը կարծես քեֆդ տեղը չի:

ՄՏԵՓԱՆ (նստում է սեղանի մոտ). Վոչինչ: Մի քիչ վիճեցինք...

ՇՈՒՇԱՆ (Կարոյի վրա ցույց տալով). Մըս հետ:

ՄՏԵՓԱՆ. Սրապեսների հետ ո՞վ է վիճում: Լոթիների խաղը մեզ ծանոթ է:

ԿԱՐՈ (աչիով է անում Շուշանին). Մըսն մրցման են կանչում. բայց նա չի ուզում... «Լոթիների խաղը մեզ ծանոթ է...»

ՄՏԵՓԱՆ. Ասա, խնդրեմ, ինչո՞ւ յես տղրուկի պես կպել ինձ:

ԿԱՐՈ. Ի՞նչպես թե ինչու: Դու հո դեմ ես նրանց, յես ել եմ դեմ. մեկ վեր մենք յերկուսով ընկեր ենք և բանվորական պրոլետարիատի ազատագրության համար կռվողներ, յես նրան բացատրում եյի եղ մասին (ձեռք է մեկնում): Ձեռքդ, Ստեփան ապեր:

ՄՏԵՓԱՆ (թխում է մի կոլով, յերեսը դարձնում է). Թո՛ւ, քեզ պես ձրիակերի վրա նայելուց ել մարդու սիրտը խառնվում է:

ԿԱՐՈ. Եղ զու լուրջ ես ասում, հա՛:

ՇՈՒՇԱՆ. Վաղ անցիր, Կարո, լաֆն է հաց ուտենք (ափսոսանքով է վերցնում եմ գդալներ. Շուշանն ապուր է լցնում, ուտում է): Պառլա՛:

ՄՏԵՓԱՆ. Ետը ելի բռակով խեղդեցին, հատն ու հաշիվը չկար... Եղ յերկուսարթի որն անխձած որ է. ասես ամենքի ձեռքը եղ որը չորանում է:

ՇՈՒՇԱՆ. Խժեղուց հետո եղպես կլինի, բա՛ս. պետք է եղպեսներին մի լավ հուպ տալ:

ՄՏԵՓԱՆ. Հա՛, հուպ կտաս, ի՞նչպես չէ: Յերես են առել, յերես. անվերջ ժողովներ, մրցումներ (ցույց է տալիս Կարոյի վրա). ա՛յ, կարճը ես սրան հուպ տալ:

ԿԱՐՈ (վրալուրված). Առաջ քեզ պետք է հուպ տալ, ա՛յ ինչ: Շատ մի... Սպասիր, յես կարելի յե ինքս կարգի կգամ. ո՞վ իմանա, կարելի յե յես շուտով կամուսնանամ եր ա՛յ ինչ:

ՄՏԵՓԱՆ. Ասա, խնդրեմ, ո՞վ է քո ռեխին նայողը:

ՇՈՒՇԱՆ. Առաջ փոխանդ կարգի բեր...

ԿԱՐՈ. Փոխանը հե՛չ, կղբատենք. խոսքը փոխանի մասին չէ:

ՇՈՒՇԱՆ. Բաս ինչի՞ մասին է.

ԿԱՐՈ. Են մասին է, վոր հարկավոր է զիտակցություն ունենալ: Նայես ել ասված է. դու ասում է զոչադ տղա յես, բայց մնում ես ելի անզիտակից սարսաղը... (Մտնում է Միկայայնը):

ՄԻՆԱՍՅԱՆ. Սեղանների շէն:

ՇՈՒՇԱՆ. Հրամե, նիստ ու անուշ արա՛:

ՄԻՆԱՍՅԱՆ. Շնորհակալություն. կուշտ եմ (նստում է Սեփանի մոտ): Ժողովից եմ գալիս:

ՄՏԵՓԱՆ. Դե, պատմիր տեսներնք, ի՞նչ կա:

ՄԻՆԱՍՅԱՆ. Քեզ են զգում, ինձ ել իհարկե: Ասես՝ ամենքը մեկ խոսք են արած, ներկում են հա՛ ներկում: Թուք ու մուր դասալիքներին, բղավում են մեկ ձայնի...

ԿԱՐՈ. Բա ինձ, Սիմոն ապեր, չե՞ն դադում:

ՄԻՆԱՍՅԱՆ (ափսոսաբեկ). Քեզ բոլորովին մոռացել են. ասես սկի չես ել յեղել աշխարհիս յերեսին:

ԿԱՐՈ. Եղ զու լուրջ ես ասում, հա՛.

ՄՏԵՓԱՆ (ափսոս մի կոլով դնելով, տեղից վեր է կենում հուզված). Ինչ ուզեն ասեն, յես իմ խոսքի տերն եմ... Ասել եմ և ելի կասեմ. դուր տեղը նոր բեռան տակ մտնելու պետք չկա...

ՄԻՆԱՍՅԱՆ. Իմ խելքս ել եղպես է կտրում: Վոչ մի մարդ չի ուղենա մեջքը ծռել:

ԿԱՐՈ. Եղ հո մեր գիտեցած պոլիտիկան է:

ՄԻՆԱՍՅԱՆ. Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ԿԱՐՈ. Վոչինչ, ենպես: Ասածդ շատ հավանեցի. հին որերը միտքս ընկան (պառլա):

ՄՏԵՓԱՆ (սեղանի վրա անցնելուց հետո է անում, հուզված). Սիմոն ջան, ինչ ուզում են՝ ասեն, բայց սիրտս ցավում է, ա՛յ ինչ: Անխախտ քսան տարի յե գործարանում եմ, կյանքիս դասալիք չեմ յեղած, գործից չեմ փախած, իսկ հիմա համեցեք... իրենք են, վոր առանց բան հասկանալու լծի տակ են ընկնում... Ասում ես՝ բղավում են:

ՄԻՆԱՍՅԱՆ. Ի՞նչքան ուժ ունեն, բղավում են:

ՄՏԵՓԱՆ (շարունակ հուզված). Դե լավ, թող գոռան, ինչքան ուղեն. շուտով կտեսներն, թե վորքան խորն են մտել: Դերաբեխներն ամեն բան մեքենայացրել են, իսկ մենք ուզում ենք պարապ ձեռքերով նրանց հետ չափվել... Ձե, եղ լինելու բան չի... Յես համաձայն չեմ և նրանց հրավերը չեմ ընդունում:

ՄԻՆԱՍՅԱՆ. Հայտնի բան է. առաջ մեքենաները բեր, դրսան, հետո արդեն չափվելու մասին խոսք բաց արա՛: Պարզ բան է, վոր դատարկ բան են մտածել: (Շուշանը սեղանը հավաքում է, Կարոն վերցնում է բառը լեվ սկսում կամաց յերգել):

ՇՈՒՇԱՆ. Լավ կանեյիր, վոր դու յեղ ժողով գնայիր: Շատ կարելի յե...

ՍՏԵՓԱՆ. Չեմ ուզում և չեմ դնա (մասնանշելով Կարոյին): Թող
սա դնա, հենց եղպեաներին և ընտրեն... Թող սրանք ղեկավարեն: Աշ-
խատանքի արտադրողականութունը թող սրանք բարձրացնեն:

ԿԱՐՈ. Եդ դու լուրջ ես ասում, հա: Դե լինի կա վոր, կարող եմ
և՛ դնալ... Ձերնի՛ կարծում եք, թե Բիջոյենց Կարոն ամբողջ կյանքը
լոթի յե մնալու...

ՍՏԵՓԱՆ. Գնա, ջանա, դնա ու ասա, վոր Ստեփանը գործից հեշ
յետ չե մնացել և մնալու յե միտք չունի, ամա անխելք բաների սիրա
չունի... Դու նրանց կասես, վոր ամենից առաջ պետք է մեքենաները
փոխվեն, հետո արդեն կարելի յե հրավեր ընդունել: Իսկ յետ ու-
զում...

ԿԱՐՈ. Հասկացանք, վոր չես ուզում, և լինի ես լրջավում: Մի
կերպ առանց քեզ և յոլա կերթան:

ՍՏԵՓԱՆ (զղպացած). Ձհաննամը, թող յոլա դնան: Իսկ յետ
չեմ ուզում... (Նետ և վազում Միշուկը):

ՄԻՇՈՒԿ. Ստեփանն ապեր, եդ ինչո՞ւ ժողովին չես դնում:

ՍՏԵՓԱՆ. Ի՞նչ եմ կորցրել ենտեղ, բան չունես:

ՄԻՇՈՒԿ. Ես ել նոր բան. ախր քեզ ընտրեցին:

ՍՏԵՓԱՆ. Ի՞նչպես թե:

ՄԻՇՈՒԿ. Միաձայն: Ազնիվ խոսք...

ՍՏԵՓԱՆ. Բան չեմ հասկանում, ի՞նչ գործի յեն ընտրել:

ՄԻՇՈՒԿ. Ընտրել են մրցակցության հանձնաժողովի անդամ,
են ել միաձայն. հիմա դու պետք ե բանվորների վստահությունն ար-
դարացնես... Դու պետք ե լինես նրանց ղեկավարը: Ազնիվ խոսք:

ՍՏԵՓԱՆ (շեղված). Եդ վճնց ախր. յետ չե՞ վոր դեմ եմ... Ձուր
տեղը պատիվ են արել: Յես ասում եյի...

ՄԻՇՈՒԿ. Ի՞նչ եյիր ասում: Թող եդ դատարկ բաները... Քեզ հո
նոր չպիտի ճանաչենք: Դե շուտ արա, դնանք... (Բառում ե Ստեփանի
թեկերից, իսկ նա համառում ե):

ԿԱՐՈ (ծոճալիք փռելով). Ի՞նչ պտուղ ե, հա. իսկ յետ արդեն
կարծում եյի, թե ընկեր եմ գտել...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է՝ զործարկումի սենյակը: Մեծ սեղան, վրան բազմաթիվ լրագրներ:
Նոտարաններ, տաբուրետներ: Չորս պատերին—ղեկավարների պատկերներ ու լո-
ղունգներ—«Բոլոր ուժերս—յերկրի ինդուստրացիան», «Ջրիակներն ու գործալիքները
սպառում են հեղուկակին» և այլն: Սեղանի մոտ նստած ե Սաթոն, վորը մի ջահել
բանվորուհի յե, գլուխը կարմիր կապած և արտահռչակով: Սաթոն ուշադրությամբ
մի բան և գրում: Կողքին կանգնած ե Կարոն, աչքի դարներու չափ զուգված:

Առաջին և յերկրորդ գործողության մեջ անցել ե յերեք-չորս ուր:

ԿԱՐՈ. Բա վճնց կլինի, Սաթո:

ՍԱԹՈ (գրում ե). Վազ անցիր:

ԿԱՐՈ. Եդ դու լուրջ ես ասում, հա:

ՍԱԹՈ. Ասում եմ, վոր համաձայն չեմ, վերջացավ գնաց:

ԿԱՐՈ. Եղպես, ասել ե թե մի կողմ քաշվենք (պառուզա): Ի՞նչ
պես հասկանամ, ես արդեն վերջնական յերես դարձնել ե, թե՞ մեջտեղը
մի ուրիշն ե տնկվել:

ՍԱԹՈ. Հա, ուրիշը:

ԿԱՐՈ. Ի՞նչ: Կարելի յե, Սաթո, սխալվում ես. մի՞թե ասածդ
ճիշտ ե:

ՍԱԹՈ. (զիր բողնում յեվ լքում ե). Ախ, Կարո, Կարո, մի ասա,
դու ի՞նչ երիկ կարող ես լինել: Այ, տեսնում ես, ցուցակով դու յերեք
որ գործի չես յեկել, այսինքն հարբածություն ես անում և աշխա-
տանքի չես գալիս... (ծիծաղով): Կինդ վոր դառնամ, դեռ կարող ես ինձ
ձեռել, քո ձեռքից եդ ել կա:

ԿԱՐՈ. Հապա թե վոր յետ մի որինակ բերեմ քեզ:

ՍԱԹՈ. Ի՞նչ որինակ:

ԿԱՐՈ. Մի դեպք իմ կյանքից... (Նետ և մտնում Միշուկը: Կա-
րոն դժկամակությամբ նեղանում ե դեպի լուսամուկ, ծխում ե):

ՄԻՇՈՒԿ. Շատ են բարկացել եդ սատանի ճուտերը: Ազնիվ խոսք:

Ախր միայն յերկու տոկոս ե պակաս... Յեվ ես բոլորի պատճառն անխ-
րով Մինասյանն ե... Դիտողություններն արտագրեցի՞ր:

ՍԱԹՈ. Այո, պատրաստ եմ:

ՄԻՇՈՒԿ. Դե, շուտ արտ, տուր (վերցնում ե արագրած քղբեր):
Այ, պատի թերթում վոր կարդան, են ժամանակ լացերը կդա: Սպասիր,
յես եզ Մինասյանի հախից ել կգամ... Դե, գնացինք (Սարյի նեհ գը-
նում են դեպի դուռը):

ԿԱՐՈ. Ո՞ւր:

ՍԱԹՈ. Եստեղից չի յերևա:

ՄԻՇՈՒԿ. Պատթերթը լույս ընծայելու, Կարո:

ԿԱՐՈ. Նո՛ւ, եզ հեռու չե:

ՄԻՇՈՒԿ (քորվում ե Կարոյի ուսերը). Գիտե՞ս ինչ. դուք շատ դո-
չող դուրս յեկաք. ձեր ցեխը կարգին առաջ ե դնում: Եսոր ամբողջ
նորմը կատարեցին...

ԿԱՐՈ. Հո, քիչ-շատ անում ենք... Դերաբինցիներից յես չենք
մնա... (Ամեք գնում են: Մի բույեից մեցում են Սեդրակյանը յեվ յերկու
բանվոր):

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Զգիտեմ, ինչի՞ յեք իմ պոչից կպել: Դիմեցեք Ստե-
փանին:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ (ձեռքի քափելով). Ստեփանի հետ ի՞նչ գործ ու-
նենք...

2-ՐԴ ԲԱՆՎՈՐ. Ստեփանի բանն ուրիշ ե, նրան մենք ճանա-
չում ենք:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ի՞նչ ես ճանաչում, խելքի տուրակ:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Են ենք ճանաչում, վոր նա են սկզբից մրցմանը
դեմ ե...

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ո՞վ ե դեմ:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Ստեփանը, ելի: Ախր դուք տեղը նրան ընտրե-
ցինք...

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Բա ի՞նչ ե ձեր կարծիքով Ստեփանը:

2-ՐԴ ԲԱՆՎՈՐ. Բանվոր ե, ելի:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Դե ուրեմն վո՞նց թե նա դեմ ե. ինքն իրան դեմ ե:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Եզ հո հաստատ ե:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ախր ինչե՞ր ես դուրս տալի, խելքի տուրակ: Ա-
սում ես բանվոր ե, են ել հանձնաժողովի անդամ, մեր ընտրածը:
Վո՞նց կարող ե նա պրոլետարական մրցակցության դեմ լինել: Եզ ա-
սածդ գիտե՞ս ինչի՞ նման կլինեք, այ, թե վոր քեզ վերցնենք անիվի
սեղ նստեցնենք ու թողնենք, վոր անիվը պատվի...

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Նո՛ւ, հետո ինչ:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Կարճ ես անիվից դուրս պրծնել:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Ո՞վ իմանա:

ՍԵԴՐԱԿՅԱՆ (հաստատվելով). Վո՛չ, չես կարող. իսկ թե կարողա-
յար դուրս պրծնել, ասել ե մահացար (մեցում ե Սեվիանը): Ահա հանձ-
նաժողովի անդամը ինքը յեկավ, նրան հարցրեք (խորտուզվում ե
լրագրի ընթերցանությունը):

ՍՏԵՓԱՆ (բանվորներին). Ի՞նչ կա, ինչի՞ յեք յեկած: Եսոր ելի՞
վեց ֆորմ փչացրել եք:

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Ի՞նչ անենք, Ստեփան, չենք հասնում:

ՍՏԵՓԱՆ. Պետք ե վոր հասնեք:

2-ՐԴ ԲԱՆՎՈՐ. Հենց դրա համար ել յեկել ենք, այսինքն մի
հնար գտնելու համար:

ՍՏԵՓԱՆ. Ի՞նչ հնար:

2-ՐԴ ԲԱՆՎՈՐ. Այսինքն վոր դուք տեղը չփչացնենք ապրանքը,
մենք Գարեգինի հետ մի բան մտածեցինք... Այսինքն մի առաջարկ
ենք ուղղում անել... (հախում ե քղբեր, ցալիս ե Սեվիանին):

ՍՏԵՓԱՆ. Բեր եստեղ... կնայենք...

1-ԻՆ ԲԱՆՎՈՐ. Տես, հա, վոր սխալ բան չլինի: Դերաբինցիները,
ասում են, վոր վաղուց արդեն եզ բանը մոցրել են:(Բանվորները գնում են):

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Նո՛ւ, եսոր ի՞նչ կա:

ՍՏԵՓԱՆ (ձեռքեր քափ ցալով). Ելի փչացրել են: Ասում եմ—մե-
քենա յե պետք: Նոր մեքենա վոր ունենայինք, են ժամանակ բանը
ուրիշ կլինեք իհարկե:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ելի պակաս են դուրս բերել:

ՍՏԵՓԱՆ. Կես տոկոս բոլոր ցեխերում:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Եզ վոչինչ, Ստեփան: Եսորվա պակասը վաղը կը-
լրացնեն:

ՍՏԵՓԱՆ. Ճիշտ ե, կարող են լրացնել:

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Այ, տեսար. իսկ դու մեկ խոսք՝ մեքենա յես ա-
սում: Պետք ե իմանաս, վոր բանը միայն մեքենայում չի, եստեղ զը-
խավորը մենք ենք, հասկանո՞ւմ ես: Մի քիչ դերաբինցիները հուպ
կտան, մի քիչ սրանք, մի քիչ ուրիշները, մեկ ել տեսար՝ մեքենաներն
ել յեկան. հասկանո՞ւմ ես (մեքս ե վազում Միսուկը պախի քերքը ձեռ-
քում, ցույց ե ցալիս Սեվիանին):

ՄԻՇՈՒԿ. Տես, վո՞նց են ներկել եսոր բարեկամիդ՝ Մինասյանին...
(Սեվիանը կարդում ե պախի քերքը, Միսուկը խոսում ե Սեդրակյանի
նեհ): Մի շատ գործնական առաջարկ կա, Սեդրակյան... Արբեցողու-

թյան և դործալքումները դեմ: Ազնիվ խոսք: Հետո առաջարկվում է աշխատավարձը ձեռները չտալ, այլ խնայողական գրքուկների միջոցով: Ետը եղ հարցը պիտի քննվի:

ՍՏԵՓԱՆ (անսպասելի կերպով բռնկեց խոսքը և սեղանին). Քոռացել եր, ուրեմն, եղ սատանի բաժինը:

ՄԻՇՈՒԿ. Ի՞նչ է, գրածը ուղիղ չի:

ՍՏԵՓԱՆ (սափացած). Վհնց թե ուղիղ չի. բոլորովին ձիշտ է, իհարկե, նա յե մեղավորը: Դերաբինցի վարպետը՝ Պետրեն՝ եղպես բան վոչ մի անգամ թույլ չի տա...

ՍԵՂՈՒԿՅԱՆ. Դերաբինցիների յետևից մենք չենք կարող հասնել:

ՍՏԵՓԱՆ. Ո՞վ ասաց՝ չենք կարող: Կարգին վոր դործ տեսնենք, կկարողանանք: Սիմոնին քսան տարի յե հանաչում եմ. դիտեմ, վոր Պետրեյից բոլորովին պակաս չի... Խելքը դիտին վարպետ է. բայց ես անգամ ուրեմն քոռացել ե... (մտնում եմ Կարոն յեվ Սաքուն):

ԿԱՐՈ. Ամա գզել են լրագրում քու Սիմոնին, Ստեփան ապեր:

ՍՏԵՓԱՆ. Յերանի չէր, վոր քեզ ել հետը մեկտեղ դադած լինեյին:

ՄԻՇՈՒԿ, Չե, ինչո՞ւ, Կարոն դոչաղ է, ետը նա ոգնեց մեղ ելեկարական հոսանքը միացնելու:

ՍՏԵՓԱՆ. Յեխերում հարկավոր է նորմն ավելացնել: Տես դերաբինցիք արդեն...

ԿԱՐՈ. Ձեռք վեր առ, ասում եմ, եղ դերաբինցիներից. նրանցից վախեցողը չենք, իմացա՞ր:

ՍՏԵՓԱՆ. Չե, ձեռք վեր չեմ առնի, վորովհետեւ դուք նրանցից յետ եք մնում. ախր յեթե պետքին պես նախելու լինենք...

ԿԱՐՈ. Եղ դու լուրջ ես ասում, հա՞: Ի՞նչ կասես, թե վոր յես հիմա, իբրեւ գիտակից մրցահրավերը ընդունող մեկը, թողել եմ խմելու ու քեֆ անելը և ամբողջ ցեխումն ել ստորագրություն եմ վերցրել մյուսներին—ես մեկ: Հետո յեվ վորոշել ենք աշխատանքից բոլորովին չուշանալ—ես ել քեզ յերկու... (ուժեղ): Ի՞նչ է խելքովդ. դերաբինցիները կդիմանան, թե վոր մենք գործին լծվենք ենպես, ինչպես պետքն է, ամենքս մեկ մարդու պես...

ՍԱԹՈ (չհամբերելով). Աչքդ սիրեմ, Կարո. ուղիղ սրտիցս խոսեցիր:

ԿԱՐՈ (աչքով անելով). Ես ասածս սխալ չեղածվ:

ՍԱԹՈ (հապելով). Չե, իհարկե...

ՍՏԵՓԱՆ (Միմասյանին նայելով). Հետո:

ՄԻՇՈՒԿ. Ի՞նչ հետո:

ՍՏԵՓԱՆ. Մնացիր սեղան:

ՄԻՇՈՒԿ. Ինչո՞ւ յեմ սեղան:

ՍՏԵՓԱՆ (սափացած). Նրա համար, վոր Սողեկենց Պետրեյից յետ մնացին: Յեվ մեր դործարանը ելի նորմից յետ մնաց:

ՄԻՇՈՒԿ. Դործարանի համար պատասխանատուն յետ չեմ:

ՍՏԵՓԱՆ. Ամեն բանվոր իր տեղը պատասխանատու յե, չէ:

ՄԻՇՈՒԿ. Ասելդ ի՞նչ է:

ՍՏԵՓԱՆ. Ե՛ն, վոր շիտակ յերեսիդ եմ ասում: Քո տեղը յետ եմ վերափոխում: Եւքան տարի բարեկամի տեղ եմ դրած քեզ և հանկարծ եղ Պետրեյի առաջ...

ՄԻՇՈՒԿ. Ի՞նչպես թե Պետրեյի առաջ: Մինչև յեբը եղ Պետրեյին աչքս պիտի կոխես. կարծում ես յետ նրանից բան պիտի սովորեմ...

ՍԵՂՈՒԿՅԱՆ. Ասենք, Դերաբինցի վարպետի հետ չափվելը քու ուժի բանը չի, Սիմոն:

ԿԱՐՈ. Տես Սիմոն ապեր, ինչքե՞ր են խզմղել քո մասին... (մտնում է լրագրին, կարդում է): Ա՛յ, լսիր՝ «Յեխը յետ է մնում և անկարող է դերաբինցիների հետ մրցակցել, վորովհետեւ նրանց մեկ հատիկ վարպետը—Պետրեն, յերկու Սիմոն արժե...»

ՍԵՂՈՒԿՅԱՆ. Ասենք եղ սուտ չե, Պետրեյի հետ չափվելը դժվար է:

ՄԻՇՈՒԿ (սափանում է). Նո՛ւ, եղ դեռ կտեսնենք (Ստեփանին): Քեզ տեսնեմ, Ստեփան, հայդե նորմն ավելացուր, թող եղ Պետրեն տնքանքա: Տեսնենք՝ վհնց է Սիմոնից անցնում... Չե, ախպեր, եղ բանը մոռացիր: Դեռ կտեսնենք՝ ո՞վ ումից դաս պետք է վերցնի...

ԲԱՆՎՈՐ (Միտուկին). Մեր կաթսայի ցեխի մասին ել սխալ են դրել: Ո՞վ ասաց, վոր մենք դերաբինցիների առաջ պիտի չոքենք. եղ մեկը կշտկես, իհարկե: Պետք վոր յեղավ մենք մի քիչ դուռ կտանք, թե չե նրանցից յետ մնալն ել մի բան չի...

ՄԻՇՈՒԿ. Չիշտ է ասածդ, դու զուր տեղը մեղ մի ամթիր, դեռ սպասիր, տեսնենք ի՞նչ է լինում:

ՄԻՇՈՒԿ. Միենուհն է, ընկերներ, վոչինչ դուրս չի գա: Դերաբինցիների հետ չափվելը մեր ուժից վեր է (բանվորին): Ձերոնք յետ են մնում...

ԲԱՆՎՈՐ. Ել յետ չենք միա, հասկանում ես:

ՄԻՇՈՒԿ (առնունակում է). Սիմոն ապերը Պետրեյի առաջ ծունկ չոքեց...

ՄԻՇՈՒԿ. Սպասիր, սպասիր. վհնց թե ծունկ չոքեց:

ՄԻՇՈՒԿ (շարունակում է)։ Դերաբերնցիք կիսեղեկն մեկ մեկ զգալ ջրի մեջ։ Դրա համար ինձ աշխատեալ է թվում, վոր լավ կանեցինք, յիթի մրցակցությունից հրաժարվեցինք։ շիպ-շիտակ ասենք, թե ձեր հրա- վերը ընդունել չենք կարող, թե մենք աղիւղ ենք ու մեր ձեռքերը նա- ղուկ են, թե մենք, թանկագին ընկերներ, թույլ արարածներ ենք և ձեզ հետ չափվելու ուժ չունենք։

ՍՏԵՓԱՆ. Նո՛ւ, եղ արդեն հիմարություն ե, ուրիշ վոչինչ։

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ո՞վ ասաց, թե հիմարություն ե։ Ասածը բոլորովին ուղիղ ե և մենք պետք ե հրաժարվենք մրցակցությունից. պրծա՛վ- գնաց։

ՍԱԹՈ. Դե, գրի՛, Միշուկ, քանի Ստեփան ապերն ետեղ ե. նա ձեռք կքաշի իբրեւ հանձնաժողովի անդամ։

ՍՏԵՓԱՆ. Վոնց թե ձեռք կքաշեմ։ Յես եղպես սարսաղ բաների տակ ձեռք քաշողը չեմ։ Ուղիղն ասած՝ թե վոր գործին պետքին պես մոտենանք, կարծում եմ, վոր մեզ կհաջողվի պարզրեւս գուրս դալ։

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Դու մոռանում ես, վոր գերաբերնցիներն իրենց բրակը 7 տոկոսով իջեցնում են, գործալքումները մեկ տասներորդով պակասեցնում են, հետո խոսք են արել ինքնարժեքը պակասեցնել. եղ բոլորը հո մեր ուժից վեր բաներ են։

ՄԻՆԱՍՅԱՆ. Ի՞նչ մեծ բան ե, վոր չկարողանանք։

ՍՏԵՓԱՆ. Իհարկե կկարողանանք։ Ա՛յ թե վոր մենք բռակը բո- լորովին վերջացնենք, են ժամանակ թո՛ղ նրանք՝ ինչքան ուզեցին, գոռ տալին մեր յետևից հասնելու։ Գործալքումներին ել կարող եյինք վերջ դնել։

ՄԻՇՈՒԿ. Այդ մեր խելքի բանը չե։ Դերաբերնցիներն ել անկաւորդ են այդ բանը միանգամից անել. իսկ դու վեր ես կացել, թե վերջ տանք։

ՍՏԵՓԱՆ (սափանում է)։ Իսկ վոր հարցնես, կկարողանանք, թե վոր պետքին պես գործ տեսնենք։ Ամենքդ մեկ խոսք—գերաբերնցիներ լի գովքն եք անում։ Իսկ մենք ուրիշ խմորից ենք թխված. թե կար- ծում եք, վոր գրողը յեկել տարե՛լ ե մեզ։ Ինչո՞ւ ուրիշին ճամբա աը- վողը ամեն անգամ մենք պիտի լինենք... Միթե՞ չենք կարող մենք ել ուրիշներին որինակ լինել։

ՄԻՇՈՒԿ. Այ, մենք հիմա կզրենք, վոր մրցակցությունից հրա- ժարվում ենք։ Գրեմ։

ՍՏԵՓԱՆ. Գրե, գրե. հսպես-հսպես բան ե, գերաբերնցի ընկեր- ներ, մենք ձեր հրավերին հոժար չենք։

ԲԱՆՎՈՐ. Ո՞վ ասաց, վոր հոժար չենք. կարող ենք ընդունել։

ՍԵԴՐԱԿՅԱՆ (Ստեփանի քնից փաշելով)։ Սպասիր, Ստեփան, դու գուր տեղը եղպես ես խոսում...

ՍՏԵՓԱՆ. Թող ինձ, խնդրեմ, մի խառնիր (Միշուկին, վորը սեղա- նի վրա նստած գրում է)։ Մենք ձեր հրավերին հոժար չենք... Գրեցի՛ր։ ՄԻՇՈՒԿ (վարանում)։ Նո՛ւ, հետո։

ՍՏԵՓԱՆ. Ուրեմն՝ հոժար չեք։

ԲԱՆՎՈՐ (բարկացած)։ Եղ դու ռւմ բերանից ես գրում, ո՞վ ե խնդրել քեզ. գլխիցդ բաներ մի հանիր, եղ չեղավ։

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ինձ թվում ե, վոր պետք ե սպասել։

ԿԱՐՈ. Ի՞նչ ասեմ քեզ մարդ պտղին. մեկ հարցնող լինի, թե ինչո՞ւ յեն սրան հանձնաժողովի անդամ ընտրել, սրան են հավատացել։

ՍՏԵՓԱՆ. Սպասիր, ջան, մի խառնի (Միշուկին)։ Գրեցիր, չե՞ վոր հոժար չենք. նրա համար հոժար չենք ձեր հրավերին, վոր մենք վորոշած ենք բռակն ու գործալքումն իսպառ վերջացնել և մեր կող- մից ձեզ ել ենք կոչ անում։

ԲԱՆՎՈՐ. Ես ուրիշ բան ե։

ՍՏԵՓԱՆ (ուրախ)։ Ի՞նչ ե, ուղիղ չե՞ ասածս. տակից հո գուրս կգանք,

ՁԱՅՆԵՐ. Ուղիղ ե, ուղիղ. իհարկե տակից գուրս կդանք։ Շատ տեղով ե ասածդ։

ՍՏԵՓԱՆ (Սեդրակյանին)։ Իսկ դու մեկ բերան գերաբերնցիների գովքն ես անում։

ՍԵԴՐԱԿՅԱՆ. Ուրեմն եղպես, Ստեփան ապեր, մրցումն ընդու- նում ենք։

ՍՏԵՓԱՆ. Ուրիշ ձար չկա՛. չե՞ վոր հրավերը մեր ընկեր բանվոր- ների կողմից ե։

ԿԱՐՈ (Ստեփանին մոտենալով)։ Եղ դու լուրջ ես ասում, հա՛մ։

ՍՏԵՓԱՆ (Հարցական հայացք ձգելով Կարոյի վրա)։ Իսկ դո՞ւ։

ԿԱՐՈ. Խոսքս խոսք ե։ Յես չեմ միա. ախր ամոթ ե, վոր յես մնացողների կարգում լինեմ և հետո...

ՍՏԵՓԱՆ (Կարոյի ուսերը քափելով)։ Ել ի՞նչ հետո, վերջացավ։ Ախր ո՞վ սխալներ չի անում... Իմ խելքս, Կարո, ենպես ե կտրում, վոր սարդիկ են ժամանակ քաղցավոր կապրեն, յերբ իբար լավ հասկանան ու միատեսակ մտածեն։

ԿԱՐՈ (ձեռքը մեկնում է)։ Ուրեմն մեկտեղ ենք։

ՍՏԵՓԱՆ (ձեռքը սեղմելով)։ Այո, մեկտեղ։



ԲԵԺԻՍՈՐԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պիյեսիյնյութը կազմում է մի շաքարի գործարանի մյուսին արած մրցանքավերը և նպատակ ունի ցույց տալու, թե ինչպես բանվոր դասակարգի նույն իսկ ամենահետամնաց խավերին հասկանալի յե դառնում այդ միջոցառումի սոցիալական բնույթը:

Յեթե նախկին, մինչհեղափոխական Ռուսաստանում, իսկ Արևմուտքում և այսօր ձեռնարկատերեր յերբեմն մրցանակադրամով խրախուսում էր այս կամ այն բանվորի արտադրողական նվաճումները, պետք է իմանալ, վոր այդ ճանապարհով ստացված յեկամուտը, վոր բազմապատիկ ավելի յե բանվորին տրված պարգևադրամից, ամբողջապես կապիտալիստի գրպանն էր մտնում: Այսպիսի խրախուսական պարգևատրության սխտեմը հատկապես և լայն չափերով կիրառում է ֆորդը, համարյա ամբողջապես դրանց վրա կառուցելով իր բարեկեցության աճումը:

Բայց կապիտալիստական ֆինանսական ուժը միաժամանակ նպաստում է նրանց քաղաքական ամրապնդմանը, վոր թույլ է տալիս նրանց ավելի ծանր դրության մեջ դնել ամբողջ բանվոր դասակարգը: Հետևապես բնական է, վոր մինչհեղափոխական Ռուսաստանում, ուր բանվորների շահագործումը տարվում էր բարբարոսական միջոցներով, պրոլետարիատը չէր կարող ունենալ իր աշխատանքի արտադրողականությունը բարձրացնող ստիմուլներ, վորոնք ծառայեցին կապիտալիստի ուժեղացմանն ու հարստանալուն և իր, բանվորի սեփական վիճակի վատթարացմանը: Այս հողի վրա բանվորական միջավայրում ծայր առին գործալքումները, արբեցողությունն և աշխատանքի ստրկական տեսակերը:

Այլ է դրությունը Խորհրդային Միության մեջ, ուր յերկրի տերերն իրենք, աշխատավորներն են, ուր ամեն մի ցեխի ու գործարանի արտադրական նվաճումներն ավելացնում են ամբողջ դասակարգի եկոնոմիկան և քաղաքական ուժը և ուր նյութական արժեքների բաշխ-

ման սխտեմն այլ է, քան թե կապիտալիստական յերկրներում, վորով և ապահովվում է թե ամբողջ բանվոր դասակարգի և թե անհատ բանվորի նյութական ու կուլտուրական բարեկեցության անշեղ աճումը:


Ահա թե ինչու ԽՍՀՄ-ի պրոլետարիատը, վոր ձեռք է առել ժողովրդական տնտեսության վերակառուցումը, վորոնքով ամենաարագ կերպով սոցիալիզմին մոտենալու ուղիները, հանդես է բերել մրցակցության գաղափարը: Յերկրում չի կարող գտնվել մի բանվոր, վորին խորթ լինեցին իր դասակարգի նպատակները:

Բանվոր դասակարգը, մրցակցության միջոցով ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը, ցույց է տալիս ամբողջ աշխարհին, վոր տիրողի համար աշխատելը իր բանվորական տերության համար աշխատելը տարբեր բաներ են: Բայց գործալքումներն, արբեցողությունը և անցյալից մնացած ստրկական տեսակերը տակավին խոր արմատ են ձգած մեր կենցաղում: Ամբողջ պրոլետարիատի միասնական և անհատ բանվորի առանձնական ճիգերով միայն հնարավոր է վերացնել հիշյալ թերությունները:

Մրցակցությունները խորոր դաստիարակչական դերը նրանումն է, վոր նա կերպարանափոխում է ամեն մի բանվորի վեջ միայն եկոնոմիկան, այլ և նրա պոխիկան:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սեփական Ղառիբյանց: Հասակավոր բանվոր է, վոր 20 տարի յե աշխատում է արտադրության մեջ: Ջանասեր է, սիրում է իր գործարանը և աչքի լուսի պես պահպանում է նրա պատիվը: Սոցմրցակցությունն ընդունելու դեմ է վոչ թե նրա համար, վոր չի ուզում անձնապես իր աշխատանքի թափն ուժեղացնել, այլ վորովհետե վախ ունի, վոր իրենց գործարանը պարտություն կկրի մրցակից գործարանից ա վելի թույլ սարքավորված լինելու պատճառով: Նա դեռ չի ըմբռնում, վոր մրցակցությունը միջոց է և վոչ նպատակ, հետևապես կարևորն այն չէ, թե վոչ գործարանն արդյոք հաղթող կհանդիսանա, այլ այն, վոր բանվորները՝ մասնակցելով մրցակցության՝ վերջ են դնում գործալքումներին և արտադրողական այլ բացերին, միաժամանակ բարձրացնելով արտադրողական նվաճումներն անքան, վորքան այդ մատչելի յե տվյալ գործարանի տեխնիկական հնարավորություններին: Նա գնահատում և պահպանում է իրեն պես մտածող հասակավոր բանվորների պատիվը: Ինքը ուրիշներին պետք տեղը գտնում է, բայց յերբեք



թույլ չի տա, վոր ուրիշներն իրեն ձեռք առնեն: Բնավորության այս գիծը բացորոշ հաստատվում է Ստեփանի վերաբերմունքով զեպի Սեդրակյանը և գործարկումի նախագահի հետ ունեցած խոսակցութեամբ: Համառ է և իր գիրնը գիտե: Դյուրագրգիռ է և չի կարողանում իր մտքերը պետքին պես արտահայտել, վորի պատճառով էլ ծաղում է կոնֆլիկտ և նա գեմ է գնում գերարկնցիները գործարանի հետ մրցակցելու առաջարկին:

Միևնայան: Բնավորութեամբ շատ է նման Դարիբեյան Ստեփանին, բայց ավելի պարզամիտ է և ծանրաշարժ:

Սեդրակյան. Գործարկումի անգամ, խեղացի, կակուղ բնավորության տեր, բայց խորամանկ մեկը: Շատ լավ գիտե յուրաքանչյուր բանվորի բնավորութեանը: Գիտե վոր բանվորին, ինչպես և յերբ պետք է մոտենալ: Առաջին տեսարանում, տեսնելով, վոր Ստեփանը շփոթվել է և չափազանց հուզված է, շատ վրա չի տալիս, այլ կամացուկ նրա ձեռքն է տալիս լրագիրը, վոր սա ինքն իրեն կարգա ու բանի էյությունը հասկանա: Յերկրորդ տեսարանում, յերբ Ստեփանը վշտանում է, վոր նորմը չի կատարված, սա մեղմորեն նրան սիրտ է տալիս, ասելով՝ «Եսորվա պակասը վաղը կլրացնեն». բայց միևնույն ժամանակ գիտենալով, վոր հասակավոր բանվորները շատ են սրտացավ զեպի իրենց գործարանը, խորամանկութեամբ կատակում է, թի՛ «գերարկնցիներին հառնելը ձեր ուժից վեր է»: Բնավորութեամբ մեղմ է և միշտ լավ արամադրության մեջ է:

Իրնույանց Կարո: Ջահել յերիտասարդ է: Ցանկալի յեօրան ներկայացնել իրրե գյուղից նոր յեկած սեզոնային բանվոր: Սիրում է խմել ու քեֆ անել: Բացասական վերաբերմունք ունի զեպի մրցակցությունը, վորովհետև մրցման մասնակցող բանվորներն իրենք են հուշ տալիս գործալիքներին և հանձն են առնում արտադրանքն ավարտել և ստանալ նույն աշխատավարձը: Պարզամիտ է և մարդու հավատացող: Տղայական բաներ շատ կան մեջը: Վախ ունի գործարկումից: Խորը մտածողներից չէ: Յերբ լսում է, վոր Դարիբեյանց Ստեփանն առարկում է մրցակցության գեմ, ինքնաբավական կերպով առաքում է՝ «Այ, մենք յերկուսս էլ միատեսակ ենք մտածում»: Խաղի ժամանակ անհրաժեշտ է ընդգծել այն տեղը, յերբ ինքնաբավականորեն ստում է Ստեփանին՝ «Այ, մենք հիմա յերկուսս ընկեր ենք և բանվոր պրոլետարիատի ազատության համար պայքարող»: Այս յերկու բանվորի մեջ յեղած տարրերությունը շատ ցայտուն պիտի

լինի: Անհրաժեշտ է ցուցադրել, վոր բանվորական շրջապատը տակավին չի վերադաստիարակել Կարոյին և վոր նրա վարքագիծը հետևանք է այն բանի, վոր նա չի հասկանում, թե սոցմրցումն ամեն մի բանվորի հատուկ գործն է: Նրա բնորոշ բացականչումը՝ «Եղ դու լուրջ ես ասում, հա՛»—այս տիպը հասկանալու բանալին է: Արտասանված պեսպես վիճակում, բայց միշտ լուրջ կերպով, այս բացականչութեանը հնարավորութեան է տալիս գերասանին խորացնել այս պարզամիտ յերիտասարդի պատկերը:

Միշուկ (կոմյերիտական): Ամենքից սիրված, ամեն տեղ հասնող, աչքաբաց մի յերիտասարդ, վոր սոցմրցման քաղաքական նշանակութեանը ըմբռնում է այնպես, ինչպես Սեդրակյանը և վոր լավ ծանոթ է բանվորների ամեն մեկի բնավորութեանը: Չոր ու ցամաք ազիտացիայով չի զբաղված նա, այլ վորոնում է մարդու բնավորութեան թույլ կողմը և այդ տեղին խփելով՝ առաջնորդում է նրան հարկավոր ուղղութեամբ: Յերկրորդ տեսարանի ամբողջ վերջին մասում Միշուկը մեկ Ստեփանին է տաքացնում, մեկ Սիմոնին:

Շուշան: Ստեփանի կինը, յուր մարդու մտերիմն ու ոգնականը: Ամուսինը նրա պարծանքն է: Գիտենալով մարդու դյուրագրգիռ բնավորութեանը՝ կշտամբանքներից խուսափում է և մեղմութեամբ առաջարկում է՝ «Կարելի չէ ժողով կերթաս»: Ամուսնու պես ջանասեր է: Կարոյի անհողութեանն ու ծուլութեանը նրան բոլորովին անհասկանալի յեն: Միշտ մաքուր, միշտ սոսուն—նա Կարոյի ձիշտ հակապատկերն է:

Սարո: Ջահել աղջիկ է, ըստ յերեւոյթին գյուղից նոր յեկած բանվորուհի, բայց արդեն տարված է հասարակական աշխատանքով: Այս տիպը ներկայացնելիս աչքի առաջ պետք է ունենալ վո՛չ թե քաղաքացի ակտիվականի, վոր յուր փոքրիկ դերով կարող էր «առաքինի կոմյերիտականի» կնիքը կրել իր վրա, այլ պետք է դուրս բերել իրրե համեստ գեղջիկուհի, վորին վերադաստիարակում է գործարանը: Բնորոշ է, վոր նա արդեն պատի թերթումն է աշխատում. նրա հարաբերութեանը Կարոյի հետ բացահայտ լիրիկական է, այսինքն Կարոյին նա հավանում է, բայց միաժամանակ վախենում է, վորովհետև գործալիք է և արբեցող: Շատ մոտ է Միշուկին: Հուժուր էլ ունի. այսպես, նա ոգնում է Միշուկին, յերբ սա ձեռք է առնում Ստեփանին և Սիմոնին վերջին տեսարանում: Դերը կատարել մեղմորեն, առանց կոպիտ շեշտերի:

Բեմադրութեան մասին: Բեմական ինտրիգն առաջ մղող մոմենտը պետք է համարվի այն հանգամանքը, վոր անհատ բանվորի վարքագծին կանոնավոր ուղղութիւն տվողը, թեկուզ այդ բանվորը մտադիր չեղած լինէր անկանոն քայլ անելու, բանվորական կոլեկտիվի միասնականութիւնն է: Ուստի հյուսվածքը հիմնված պիտի լինի դեպքերի ընթացքի և գործելակերպի հանկարծական փոփոխութիւններէ վրա:

Այսպէս, առաջին տեսարանում Ղարիբջանց Ստեփանի դիմադրութեան իսկական պատճառը պետք է քողարկվի նրա դժգոհութեամբ մինչև «Ելի բռակներ» ռեպլիկը, վորից հասկանալի չէ դառնում նրա իսկական վերաբերմունքը դեպի աշխատանքը: Իսկ այս ռեպլիկից և Մինասյանի գալուց ու հայտարարելուց հետո, թե բանվորները նրանց հայհոյում են, Ստեփանն իր դյուրարժեքը բնավորութեան շնորհիվ այնքան է տաքանում, վոր կարծես ել չպիտի մնա բանվորական կոլեկտիվում: Յեւ վերջապէս, յերբ Ստեփանի զայրույթն իր գաղաթնակետին հասած ըռպելին ներս է մտնում Միշուկը, հաղորդելով, թե նա սոցմըցման հանձնաժողովի անդամ է ընտրված, այս վերջինը կորցնում է ինքն իրեն՝ ընկնելով կոմիկական վիճակի մեջ, իսկ հանդիսականն ըմբոսնում է բանվորների իսկական վերաբերմունքը դեպի Ղարիբջանց Ստեփանը:

Յերկրորդ տեսարանում գործող անձերի վերաբերմունքի մեջ յերևան յեկած անակնկալները հետևյալ յերևույթների հետևանք են.

1. Գործալիք Կարոն, այդ փնթին ու անհոգը, դեպի Սաթոն իր տածած զգացմունքի շնորհիվ ինչպէս նաև սոցմըցման ընդհանուրի մեջ առաջ բերած վոգեվորութեան պատճառով, զգում է իրեն հաղթական վորպէս, փեսա և վոչ այնքան անհուսալի, վորպէս արտադրող: Նրա նախաձեռնութեամբ հարևան ցեխը հրավիրում է սոցմըցման՝ հարեցողութեան ու գործալքման վերջ տալու համար:

2. Յերկրորդ տեսարանում, յերբ բանվորներն սկսում են վատաբանել Ստեփանի բարեկամ Սիմոնին, սոցմըցմանը մասնակցող դերաբինցի Պետրեյից յեա մնալու պատճառով: Ստեփանն իր պաշտպանութեան տակ է առնում Սիմոնին, քայց վերջը, յերբ նույն Սիմոնը գալիս է գործարկում, Ստեփանը հարձակվում է նրա վրա և կշտամբում, թե դերաբինցի վարպետը նրանից շատ ավելի հմուտ է ու փորձված: Միշուկը և Սեդրակյանը, ոգտվելով այս խոսքերից, սկսում են կրակի վրա յուղ ածել, ասելով, թե այսպիսի պայմաններում լավագոյն է սոցմըցման մասին նույն իսկ չմտածել. այս միջոցով նրանք հույս ունեն Ստեփանի մեջ բեկում առաջ բերել և յերբ հարցնում են նրան՝ «հրաժարականը գրէնք», պատասխան են ստանում «գրեցեք»: Այստեղ

ուրեմն անհրաժեշտ է խաղի թափը հապաղել և Միշուկի ու Սեդրակյանի շփոթութիւնը յերկարացնել, վորովհետև սրանք վախեցել են, թե հրահրման չափն անց են կացրել:

Ցնցող տպավորութիւն է գործում այնուհետև Ստեփանի հայտարարութիւնը, վորով նա առաջարկում է առաջարկված մըցման հրավերից հրաժարվել և առաջարկել նոր և ավելի դժվարին պայմաններ:

Ահա սույն անակնկալների շնորհիվ է, վոր այս փոքրիկ պիէսը կարող է ծառայել վորպէս մի զվարճալի կոմեդիա, վոր անմեղ և դյուրըմբռնելի ձևով մատչելի չէ դարձնում հեղինակի հիմնական միտքը, վոր զրկված է գործարկումի նախագահ Սեդրակյանի բերանը՝ «բանվոր է, ասում էս, ուրեմն ինչպէս կարող է նա պրոլետարական մըցման դեմ լինել. թե վոր քեզ վերցնենք անիվի մեջ նստացնենք ու թողնենք վոր անիվը պտտվի, կարող էս դու անիվից դուրս պրծնել: Վոչ, չես կարող. իսկ թե կարողացար, նշանակում է մահացար»:






ՀՀ Ազգային գրադարան



NL0303783



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գինն է 20 ԿՈՊ.

247503

LA 247
119
Цена 20 коп.
х. 5. 0



НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Н. ЗАДОНСКИЙ

ВЫЗОВ

Пьеса в 2 действиях

1931—VIII

Сев.-Кав. Ир. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.
«К Р А Й Н А Ц И З Д А Т»